ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ՁԵՌԱԳՐԵՐԻ Ա ԽՄԲԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄԸ XI Դ. ՎԵՐՋ - XVII ԴԴ.

ՆԱՐԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ

VIII դարի առաջին կեսին (ըստ Սամուել Անեցու՝ 721 կամ 723 թթ.)[1] Հովհաննես Իմաստասեր Օձնեցի կաթողիկոսը (717-728 թթ.), վերախմբագրելով և վերաձևելով մինչ այդ կիրառվող կանոնական հավաքածուն կամ հավաքածուները, կազմում է «Կանոնագիրք Հայոց» ժողովածուն: 24 կանոնախմբից բաղկացած այս ժողովածուն, հետագայում ենթարկվելով զանազան խմբագրությունների, ընդլայնվում է և արդեն XI դարի առաջին կեսին (մինչև 1056-1059 թթ.) ընդգրկում ԽԱ (41) կանոնախումբ[2]: 1056-1059 թթ. միջակայքում այդ 41 կանոնախմբերի հիման վրա առաջանում է «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի մեկ այլ տարբերակը՝ Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբի սկզբնական օրինակը[3]: Այսուհետ «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի զարգացումն ընթանում է երկու ուղղություններով: Կանոնագիրք ձեռագրերի Ա և Բ խմբերը[4], հիմքում ունենալով Հովհաննես Օձնեցու կազմած 24 կանոնախմբերից բաղկացած ժողովածուն, անցնում են զարգացման տարբեր ուղիներ, խմբագրվում, սրբագրվում են տարբեր ժամանակներում և տարբեր անձանց կողմից՝ ելնելով տվյալ ժամանակի հրամայականից:

---

[1] Սամուել Անեցին (1100/05-1185/90 թթ.) իր Ժամանակագրության մեջ 723 թ. (ՉԻԳ՝ Փրկչական թվական) և 721 թ. (ՃՀ՝ Հայոց թվական) տեղի ունեցած իրադարձությունների շարքում նշում է. «Սուրբ իմաստասէրն Յոհան **կանոնական կարգաւք պայծառացոյց զեկեղեցիս**...» (**Սամուէլ Անեցի**, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց Յաղագս Գիւտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ, բնագիրը կազմեց **Ա. Հայրապետյանը**, Եր., 2011, էջ 105):

[2] Այս 41 կանոնախմբերը տե՛ս «Կանոնագիրք Հայոց», աշխ. **Վ. Հակոբյանի**, հտ. Ա, Եր., 1964, էջ 18-537, հտ. Բ, Եր., 1971, էջ 3-243 (այսուհետ՝ «Կանոնագիրք Հայոց»):

[3] Առավել մանրամասն տե՛ս **Ն. Վարդանյան**, Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբի կազմավորումն ու հետագա խմբագրությունը 78 կանոնախմբերի սահմաններում, «Պատմա-բանասիրական հանդես» (այսուհետ՝ ՊԲՀ), 2014, № 3, էջ 130-132, նաև **նույնի**՝ Գևորգ Երզնկացին և «Կանոնագիրք Հայոց» ժողովածուն, «Բանբեր Երևանի համալսարանի. Հայագիտություն», 2015, № 2, էջ 51-52:

[4] Կանոնագիրք ձեռագրերի Ա և Բ խմբերը, հիմքում ունենալով Հովհաննես Օձնեցու կազմած «Կանոնագիրք Հայոց» ժողովածուն, միմյանցից տարբերվում են ընդգրկած կանոնախմբերի քանակով և հաջորդական դասավորվածությամբ: Ձեռագրերի Ա խումբը բաղկացած է 57-60 կանոնախմբերից. այստեղ Հովհաննես Օձնեցու 32 կանոններից բաղկացած կանոնախումբը 24-րդ համարի ներքո է: Կանոնագիրք ձեռագրերի Բ խումբն ընդգրկում է 78-81 կանոնախմբեր. այստեղ Հովհաննես Օձնեցու կանոնախումբը 36-րդ կամ 42-րդ համարի ներքո է: Կանոնագիրք ձեռագրերի Ա և Բ խմբերի պայմանական այս անվանումները տվել է Վ. Հակոբյանը (տե՛ս «Կանոնագիրք Հայոց», հտ. Ա, Ներածություն, էջ XXX):

1056-1059 թթ. հետո իրականացված խմբագրության շնորհիվ «Կանոնագիրք Հայոց» ժողովածուն (ձեռագրերի Ա խումբ) ընդլայնվում է և XI դարի երկրորդ կեսին (մինչև 1098 թ.) բովանդակում 57 կանոնախումբ[5]:

XI դարի վերջից սկսած՝ «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի հետագա ընդլայնումը ձեռագրերի Ա խմբի շրջանակներում ընթանում է տարբեր ուղղություններով: Այդ են վկայում մեզ հասած բազմաթիվ գրչագրեր: Կանոնագիրք ձեռագրերի Ա խմբին պատկանող այս գրչագրերը տարբերվում են միմյանցից վերը նշված 57 կանոնախմբերից հետո ընդգրկված կանոնախմբերով և ներկայացնում են ձեռագրերի Ա խմբի տարբեր ենթախմբերը:

Սույն հոդվածում կներկայացնենք այդ ենթախմբերը և այն փոփոխությունները, որոնց ենթարկվել է «Կանոնագիրք Հայոց» ժողովածուն յուրաքանչյուր խմբագրության ժամանակ:

Այսպես՝ Կանոնագիրք ձեռագրերի Ա խմբի 57 կանոնախմբերից հետո իրականացված առաջին խմբագրությունը ներկայացնում են Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի (այսուհետ՝ ՄՄ) 6409 (XIII դ.), 8926 (XV դ.), 795 (1618 թ.), 2635 (1635 թ.), 6496 (1637 թ.), 2655 (XVII դ.), 2596 (XVII դ.) թվահամարի ձեռագրերը: Դրանցում «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի 57-րդ՝ Հովհան Մանդակունու «Կոչումն ապաշխարութեան» կանոնախմբից հետո դրված է «Կանոնք տեառն Սիմեւոնի՝ Աղուանից կաթողիկոսի յետ կործանմանն Ներսէսի՝ Աղուանից կաթողիկոսի, որ վասն Քաղկեդոնին խորհելոյ եւ շփոթելոյ զԱղուանք, մերժեցաւ ձաղանաւք ընդ ձեռն Եղիայի՝ Հայոց կաթողիկոսի եւ ժողովոյն Աղուանից»[6] կանոնախումբը: Եվ եթե Վ. Հակոբյանն ընդունում է սա ուղղակի որպես կանոնախմբի հավելում[7], ապա մենք գտնում ենք, որ այս կանոնախումբն ավելացվել է Կանոնագիրք ձեռագրերի Ա խմբի հերթական խմբագրության ժամանակ: Նշենք, որ Սիմեոն կաթողիկոսի կանոնախումբը ոչ միայն ուղղակի ավելացվել է, այլև ընդգրկվել է ժողովածուի բովանդակության և առարկայական ցանկերում: Այս կանոնախումբը թե՛ բովանդակության ցանկում, թե՛ բուն բնագրում համարակալվել է «ԾԸ» (58) հերթական համարով, իսկ կանոնները՝ «Ա/ՌՅԻԹ - Է/ՌՅԼԵ» մասնավոր և ընդհանուր կարգահամարներով[8]: Բացի այդ, այս խմբա-

---

[5] Վ. Հակոբյանն իր «Կանոնագիրք Հայոց» մեծարժեք աշխատության մեջ հրատարակել է ձեռագրերի Ա խմբի այս 57 կանոնախմբերը (տե՛ս «Կանոնագիրք Հայոց», հտ. Ա, էջ 18-537, հտ. Բ, էջ 3-304):

[6] ՄՄ ձեռ. 6409, թ. 136ա-137բ, ձեռ. 8926, թ. 207բ-209բ, ձեռ. 795, թ. 189ա-190բ, ձեռ. 2635, թ. 134ա-135բ, ձեռ. 6496, թ. 219բ-222բ, ձեռ. 2655, թ. 156ա-159ա, ձեռ. 2596, թ. 161ա-163բ:

[7] Տե՛ս «Կանոնագիրք Հայոց», հտ. Ա, Ներածություն, էջ XXXI, հտ. Բ, Ներածություն, էջ XXIX :

[8] Տե՛ս ՄՄ ձեռ. 8926, թ. 1բ, 2բ-12բ, 207բ-209բ, ձեռ. 2635, թ. 1բ, 1բ-10բ, 134ա-135բ, ձեռ. 6496, թ. 1բ, 1բ-13ա, 219բ-222բ: Այս ենթախմբի ՄՄ 795 թվահամարի ձեռագրում բովանդակության և առարկայական ցանկերն ընդօրինակված չեն, իսկ ՄՄ 6409, 2596, 2655 գրչագրերում թերթերի թափվածության պատճառով ցանկերը թերի են կամ ամբողջությամբ թափված:

գրության ժամանակ անհայտ խմբագիրը կամ խմբագիրները վերաձևել են բովանդակության և առարկայական ցանկերը՝ ընդգրկելով դրանց մեջ նաև իրենց կողմից ավելացված Սիմեոն Աղվանից կաթողիկոսի կանոնախումբը:

Այսպես՝ կատարված խմբագրական աշխատանքների ընթացքում խմբագիրը կամ խմբագիրները բովանդակության ցանկը դասավորել են այբբենական հերթականությամբ՝ խորագրերի դիմաց նշելով կանոնախմբի հերթական կարգահամարը. «**Այս ինչ կայ ի գիրս կանոնաց** - **Ա**. Առաքելական կանոնք. Գլուխք ԼԴ, **Բ**. Առաքելական կանոնք ի ձեռն Կղեմայ. Գլուխք ՁԵ, **Ե**. Անկիւռիայ. Գլուխս Ի... **ԾԸ**. Սիմէոնի Աղուանից կաթողիկոս. Գլուխս Է... **ԻԷ**. Փիլիպպոսի առաքելոյ. Գլուխ Ը»[9] (այս և հետագա ընդգծումները մերն են – Ն. Վ.):

Իսկ առարկայական ցանկը համակարգել են ըստ կանոնների բովանդակության: Նույն նյութին առնչվող կանոններն առանձին ենթավերնագրերով համախմբել են միևնույն խորագրի ներքո, այսպես օրինակ՝ «Դարձեալ վասն պահոց – ա. Պահք Աստուածայայտնութեանն՝ ՁՁԳ, ՌՅԺԸ, ՌՅԺԹ, ՌՅԻ, ՌՅԻԱ, ՌՅԻԲ, ՌՅԻԳ, ՌՅԻԴ: բ. Պահք Վարդավառին, Առաջաւորին, Աստուածածնին, Սուրբ Խաչին՝ ՇՇԷ, ՈԼԷ, ՌԽԹ, ՌՅԺԷ»[10]:

Կանոնագիրք ձեռագրերի Ա խմբի այս ենթախմբի մեզ հասած հնագույն գրչագիրը XIII դարում ընդօրինակված ՄՄ 6409 թվահամարի ձեռագիրն է: Սակայն, ինչպես պարզեցինք, Կանոնագիրք ձեռագրերի Ա խմբի այս խմբագրությանն է պատկանել նաև Ներսես Լամբրոնացու (1153-1198 թթ.) կամ «Սկևռայի մեծ Կանոնգիրքը», որից բազմաթիվ մեջբերումներ է կատարել Գևորգ Սկևռացին (Լամբրոնացին՝ 1245-1301 թթ.) Տոնացույցի[11] իր տարբերակը կազմելիս: Ուշագրավ այս Տոնացույցում պահպանված Հովհաննես Երուսաղեմացու, Սեբերիանոսի, Դիոնիսիոս Արիոպագացու և Մանուելի կանոնախմբերի ընդհանուր կարգահամարների՝ ՌՅԺԸ, ՌՅԻԳ, ՌՅԻԵ, ՌՅԻԶ, և «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի այս խմբագրությունը ներկայացնող ՄՄ 8926 (XV դ.) և 6496 (1637 թ.) թվահամարի ձեռագրերի համապատասխան կանոնախմբերի կարգահամարների համընկնումն էլ փաստում է, որ Ներսես Լամբրոնացու Կանոնագիրքը պատկանել է ձեռագրերի Ա խմբին և

---

[9] ՄՄ ձեռ. 8926, թ. 1աբ:

[10] ՄՄ ձեռ. 6496, թ. 1բ:

[11] Արժեքավոր այս Տոնացույցը մինչև այժմ հայտնի էր միայն Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի մատենադարանի (այսուհետ՝ Երուսաղեմ) 1946 թվահամարի ձեռագրում առկա ընդօրինակությամբ: Մինչդեռ մեր կատարած ուսումնասիրությունների շնորհիվ պարզ դարձավ, որ Տոնացույցի այս եզակի օրինակը պահպանվել է նաև ՄՄ 3919 թվահամարի ձեռագրում: Ընդ որում՝ ուշագրավ է այն հանգամանքը, որ այս ձեռագիրը գրիչ Հակոբ Լեհացին ընդօրինակել է Երուսաղեմի թիվ 1946 գրչագրից Կոստանդնուպոլսում մինչև 1660 թվականը (առավել մանրամասն տե՛ս **Ն. Վարդանյան**, Սկևռայի մեծ Կանոնգիրքը և դրա պատկանելությունը Կանոնագիրք ձեռագրերի Ա խմբին, «Կանթեղ» գիտական հոդվածներ, Եր., 2014, № 1, էջ 101-107):

ընդգրկել նշված գրչագրերի 58 կանոնախմբերը[12]:

Հետևաբար, կարող ենք վստահաբար շեշտել, որ «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի վերը ներկայացված խմբագրությունը կատարվել է մինչև 1198 թ.:

58 կանոնախումբ է պարունակում նաև ՄՄ 3148 (XVII-XVIII դդ.) ձեռագիրը, սակայն, ի տարբերություն վերոնշյալ ձեռագրերի, այստեղ ավելացված է Հովհան Ոսկեբերանի անվամբ հայտնի «Յաղագս սահմանի կանոնաց կարգաւորաց, որք զան խոստովանութիւն» կանոնախումբը, որը, ցավոք, թերի է՝ ձեռագրի վերջին թերթերի թափվածության պատճառով[13]: Հետևաբար, չենք կարող ասել՝ արդյո՞ք այս ձեռագիրն այլ կանոնախմբեր պարունակել է, թե՛ ոչ: Ի տարբերություն Սիմեոն Աղվանից կաթողիկոսի կանոնախմբի՝ Հովհան Ոսկեբերանի վերոնշյալ կանոնախումբը իրավական հաստատում չի ստացել, չունի ընդհանուր համարակալում և ժողովածուի բովանդակության և առարկայական ցանկերում չի ընդգրկվել:

Հովհան Ոսկեբերանին վերագրվող նույն կանոնախումբն են բովանդակում նաև ՄՄ 9488 (1621 թ.), 8158 (1635 թ.), 7580 (1651 թ.), 7317 (1652 թ.), 3291 (1653 թ.) թվահամարի ձեռագրերը և մեկ տասնյակից ավելի այլ գրչագրեր[14]: Այս Կանոնագրքերում, բացի նշված կանոնախմբից, առկա են նաև Բարսեղ Կեսարացուն վերագրվող «Նորին կանոնք երրորդ Բարսղի Կեսարու հայրապետին արարեալ. Գլուխք ՀԷ» կանոնախումբը և Հակոբ Ղրիմեցու «Յաղագս պսակի ամուսնացելոց» և «Յաղագս ազգականութեան» բնագրերը[15]: Բացառությամբ ՄՄ 7580 և 3291 թվահամարի գրչագրերի, այս ենթախմբի մյուս ձեռագրերում 57-րդ կանոնախմբից՝ Հովհան Մանդակունու «Կոչումն ապաշխարութեան» բնագրից հետո ավելացված վերոնշյալ կանոնախմբերը չունեն հերթական կարգահամարներ, իսկ կանոնները՝ ընդհանուր համարակալում:

Վ. Հակոբյանը, հիմք ընդունելով ՄՄ 9488 թվահամարի ձեռագրում գրչի թողած հետևյալ տեղեկությունը. «Ծանիջի՛ք, ո՛վ իմաստուն ընթերցողք, որ այս Գ կանոնքս՝ Բարսղի ՀԷ գլուխն եւ Յոհան Ոսկէբերանի ՃԳ գլուխն եւ Յակոբ Ղրիմեցոյ կանոնքն ոչ կայր ի բուն օրինակն. մեք յայլմէ ծեր օրինակէ գտաք եւ եդաք աստ ի կարգի, անմեղադիր լերուք»[16], են-

---

[12] Առավել մանրամասն տե՛ս **Ն. Վարդանյան**, Սկևռայի մեծ Կանոնագիրքը..., էջ 107-113:

[13] Տե՛ս ՄՄ ձեռ. 3148, թ. 186ա-188բ:

[14] Տե՛ս ՄՄ ձեռ. 3706 (1636 թ.), 4403 (1647 թ.), 4631 (1649 թ.), 5782 (1651 թ.), 5894 (1664 թ.), 2883 (1665 թ.), 3099 (XVII դ.՝ մինչև 1667 թ.), 3097 (XVII դ.՝ մինչև 1681 թ.), 449 (1757 թ.), 3297 (1780 թ.), 3059 (1870 թ.), 3065 (XVIII դ.):

[15] Տե՛ս ՄՄ ձեռ. 9488, թ. 342բ-367բ, ձեռ. 3706, թ. 209ա-228ա, ձեռ. 4403, թ. 259ա-81բ, ձեռ. 4631, 267ա-290ա և այլն:

[16] ՄՄ ձեռ. 9488, թ. 335բ: Սույն հիշատակարանն առավել համառոտ առկա է նաև այս ենթախմբի մի քանի ձեռագրերի 58-րդ կանոնախմբի վերնագրում. «Նորին կանոնք երրորդ Բարսեղի Կեսարու հայրապետին արարեալ, գլուխք ՀԴ, զոր ոչ կայր ի բուն

թաղրում է, որ եթե այդ հիշատակարանը ընդօրինակված չէ մի այլ, ավելի հին ձեռագրից, ապա այդ երեք կանոնախմբերը «Կանոնագիրք Հայոց» ժողովածու է ներմուծել ձեռագրի գրիչ Գրիգոր քահանան 1621 թվականին[17]:

Մեր կարծիքով, սակայն, գրիչն իր ընդօրինակությունն սկսել է 57 կանոնախմբից բաղկացած մի Կանոնագրքից, ապա «յայլմէ ծեր» օրինակից ավելացրել նշված բնագրերը: Ընդ որում՝ «յայլմէ ծեր օրինակէ» նշումը վերաբերում է ոչ թե առհասարակ հին որևէ ձեռագրի, այլ Կանոնագրքի մի հին տարբերակի: Մեր այս ենթադրությունը հաստատում է ՄՄ 3148 ձեռագիրը, որը, ընդօրինակված լինելով բավականին հին նախագաղափարից, բովանդակում է նաև Հովհան Ոսկեբերանի վերոնշյալ կանոնախումբը:

Անդրադառնալով այս բնագրերի հավելման ժամանակին՝ պետք է նշենք, որ դա տեղի է ունեցել 1416 թվականից հետո, քանզի Հակոբ Ղրիմեցին «Յաղագս ազգականութեան» երկը գրել է 1416 թ. Թովմա Մեծոփեցու խնդրանքով: Այդ է վկայում ՄՄ 10137 (1389 թ., XV դ.՝ 1416 թ.-ից հետո) թվահամարի ձեռագրում պահպանված Հակոբ Ղրիմեցու հեղինակած նախագաղափար հիշատակարանը. «Արդ, ո՛վ սուրբ բաբունապետդ հեզահոգի (իմա՝ Թովմա Մեծոփեցի – *Ն. Վ.*), ընկալ զսակաւ ընծայս ի տըխեղծ մատանց եւ յանարժան անձնէ, իբրեւ զխերեւէշս այրոյն լօմայի ի քումդ յընդարձակութեան գանձարանի սրտիդ սենեկի... **Գրեցաւ ի թվականութեանս Հայոց ՊԿԵ. (1416)**, ի հռչակաւոր վանքս Մեծոփոյ... Արդ, աղաչեմ զամենեսեան, որք ընթեռնոյք եւ կամ օրինակէք, մեղաւոր Յակոբ վարդապետիս Աստուած ողորմի հրամեցէք...»[18]: Իսկ այն, որ պատվիրատուն Թովմա Մեծոփեցին է, հաստատում է Կանոնագրքերում «Յաղագս ազգականութեան» երկի վերջում գրված հիշատակագրությունը. «**Ի խնդրոյ Թումայի վարդապետի** հրեշտակաբնակ սուրբ ուխտիս Մեծոբազնաց (իմա՝ Մեծոփայ վանաց - Ն. Վ.) եւ ես ծառայաբար կատարեցի Յակոբ վարդապետս Ղրիմեցի՝ աշակերտ Գէորգա վարդապետի եւ քաջ դիտապետի Եզընկեցոյ. Յաղագս ազգականութեանց բաժանմանց»[19]:

Ջ. Էյնաթյանը, անդրադառնալով Հակոբ Ղրիմեցու «Յաղագս ազգականութեան» երկին, նշում է, որ այն գրվել է Մեծոփում[20], և որ «Յաղագս պսակի ամուսնացելոյ» բնագիրը «...ամենայն հավանականությամբ, կազմել է «Յաղագս ազգականութեանն» գործի մի մասը կամ շա-

---

օրինակն, յետո գտեալ յայլում յօրինակի եւ աստ եդաք» (ՄՄ ձեռ. 3706, թ. 209ա, ՄՄ ձեռ. 5782, թ. 280ա և այլն): Հիշատակարանը նույնությամբ պահպանվել է նաև ՄՄ 8158 գրչագրում (տե՛ս թ. 335բ):

[17] Տե՛ս «Կանոնագիրք Հայոց», հտ. Բ, Ներածություն, էջ XXIX-XXX:

[18] ՄՄ ձեռ. 10137, թ. 290ա:

[19] ՄՄ ձեռ. 9488, թ. 367բ, ձեռ. 3706, թ. 227բ, ձեռ. 4403, թ. 1647, ձեռ. 4631, թ. 290ա և այլն, հմմտ. ՄՄ ձեռ. 10953, թ. 152բ, ձեռ. 10311, թ. 252բ և այլն:

[20] Տե՛ս նաև **Խ. Ճլզյան**, Հակոբ Ղրիմեցի և իր «Յաղագս ազգականութեանց բաժանման» գրչագիրը, «Բազմավէպ», Վենետիկ, 1945, թիւ 1, էջ 15:

ռունակությունը և որը հետագա գրիչների կողմից անջատվել, դարձել է առանձին գործ»[21]:

Որպես առանձին երկեր դրանք ընդգրկվել են նաև «Կանոնագիրք Հայոց» ժողովածու: Ուշագրավ է այն հանգամանքը, որ Հակոբ Ղրիմեցու «Յաղագս պսակի ամուսնացելոյ» և «Յաղագս ազգականութեան» բնագրերը (որպես հետագա հավելումներ) առկա են Կանոնագրքի թե՛ Ա, թե՛ Բ ձեռագրախմբերում: Մեր կարծիքով, դա պայմանավորված է երկի կարևորությամբ և ժամանակի հրամայականով: Այստեղ հեղինակը հիմնավորված և մանրամասն խոսում է ոչ միայն ամուսնացողների չափահասության տարիքի մասին, այլև անդրադառնում այնպիսի կարևոր խնդիրների, ինչպիսիք են՝ խնամիության արյունակցական և հոգևոր աստիճանները՝ ներկայացնելով այդ ամենը համապատասխան աղյուսակներում: Բարձր գնահատելով Հակոբ Ղրիմեցու այս երկը՝ Խ. Ճլզյանը գրում է. «Խրիմեցին միակն է, որ մանրամասն եւ ընդարձակօրէն կը խօսի տհասութեան եւ մանաւանդ ճիւղագրութեան մասին»[22]:

Ինչևէ, 1416 թվականից մինչև XVII դարը Կանոնագիրք ձեռագրերի Ա խմբի 57 կանոնախմբերին ավելացվել են Բարսեղ Կեսարացու, Հովհան Ոսկեբերանի և Հակոբ Ղրիմեցու վերը նշված կանոնախմբերը, իսկ արդեն XVII դարում (մինչև 1651 թ.) դրանք, համապատասխան՝ մասնավոր և ընդհանուր համարակալմամբ, ընդգրկվել են ժողովածուի բովանդակության և առարկայական ցանկերում: Բովանդակության ցանկում այս կանոնախմբերն ստացել են՝ ԾԸ (58), ԾԹ (59), Կ (60) հերթական համարները[23]: Իսկ առարկայական ցանկում խմբագիրը կամ խմբագիրները համապատասխան խնդրին առնչվող վերնագրերի դիմաց հավելել են այս կանոնների ընդհանուր համարները, այսպես օրինակ՝ «Քահանայ կամ աշխարհական, որ ի հարցուկս երթայ ԺԷ, ՇԷ, ՇԶԳ, **ՌՆՂԳ, ՌՆՂԴ**»[24] (ընդգծված կարգահամարները Հովհան Ոսկեբերանին վերագրվող կանոնախմբի՝ ՁԴ, ՁԵ կանոնների ընդհանուր համարներն են) կամ՝ «Ի սուրբ խորհուրդն՝ հաց ջերմ և բաժակ անապակ՝ ԼԱ, ԼԷ, ՈՁԱ, ՉԼԴ, ՌՄԾԴ, **ՌՅՂԹ**, **ՌՆ, ՌՅԿԴ, ՌՆԲ**»[25] (ընդգծվածները Բարսեղ Կեսարացուն վերագրվող երրորդ կանոնախմբի ԿԷ, ԿԸ, ԼԲ, Հ կանոններն են): Կանոնագիրք ձեռագրերի Ա խմբի շրջանակներում «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի այս վերջին խմբագրության օրինակն են ներկայացնում ՄՄ 7580 և 3291 գրչագրերը:

---

[21] **Հակոբ Ղրիմեցի**, Տոմարագիտական աշխատություններ, աշխ. Ջ. Էյնաթյանի, Եր., 1987, էջ 26:

[22] **Խ. Ճլզյան**, նշվ. աշխ., էջ 15:

[23] Տե՛ս ՄՄ ձեռ. 3291, թ. 167ա-168ա, հմմտ. ձեռ. 7580, թ. 59բ:

[24] ՄՄ ձեռ. 3291, թ. 441բ: Օրինակները բերում ենք ըստ ՄՄ 3291 ձեռագրի, քանզի այս խմբագրությունը ներկայացնող մյուս՝ ՄՄ 7580 ձեռագրի թերթերը թափված են և ընդօրինակված Կանոնագիրքը այստեղ թերի է:

[25] Նույն տեղում, թ. 442ա:

Այսպիսով՝ «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի հերթական խմբագրությունը տեղի է ունեցել XI դարի վերջից (1098 թ.-ից հետո) XII դարի երկրորդ կեսն ընկած ժամանակահատվածում: Այս խմբագրության ժամանակ անհայտ խմբագիրը կամ խմբագիրները Կանոնագիրք ձեռագրերի Ա խմբի ԾԷ (57) կանոնախմբերին հավելել են «ԾԸ. Սիմէոնի Աղուանից կաթողիկոս. Գլուխս Է» կանոնախումբը՝ ընդգրկելով այն ժողովածուի՝ իրենց կողմից ձևափոխված բովանդակության և առարկայական ցանկերում:

Մեկ այլ խմբագրության ժամանակ Կանոնագիրք ձեռագրերի Ա խմբի 57 կանոնախմբերին XV դարից (1416 թ.) հետո մինչև XVII դարն ընկած ժամանակամիջոցում ավելացվել են Բարսեղ Կեսարացուն վերագրվող՝ «Նորին կանոնք երրորդ Բարսղի Կեսարու հայրապետին արարեալ. Գլուխք ՀԷ», Հովհան Ոսկեբերանի անվամբ հայտնի՝ «Յաղագս սահմանի կանոնաց կարգաւորաց, որք զան խոստովանութիւն» կանոնախմբերը և Հակոբ Ղրիմեցու «Յաղագս պսակի ամուսնացելոց» և «Յաղագս ազգականութեան» բնագրերը՝ առանց ընդհանուր և մասնավոր համարակալման: XVII դարում (մինչև 1651 թ.) այդ կանոնախմբերը, համապատասխան՝ մասնավոր և ընդհանուր համարակալմամբ, ընդգրկվել են ժողովածուի բովանդակության և առարկայական ցանկերում՝ բովանդակության ցանկում ստանալով՝ ԾԸ (58), ԾԹ (59), Կ (60) հերթական համարները (Հակոբ Ղրիմեցու երկերը մեկտեղվել են մեկ (Կ) ընդհանուր համարի ներքո): Այս խմբագրությամբ էլ եզրափակվել է «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի ձեռագրերի Ա խմբի հետագա ընդլայնումը:

Բանալի բառեր - *«Կանոնագիրք Հայոց», Կանոնագիրք ձեռագրերի Ա խումբ, կանոնախումբ, Հովհան Մանդակունի, Հակոբ Ղրիմեցի*

НАРИНЕ ВАРДАНЯН – ***Расширение с конца XI по XVII вв. рукописной группы А Книги канонов.*** – После 1098 г. рукописная группа "А" Книги канонов развивалась разнонаправленно. Многочисленные рукописи, относящиеся к этой группе, отличаются друг от друга и представляют собой различные её подгруппы.

Очередная редакция Книги канонов (группа "А"), представленная рукописями № ММ6409, 8926, 795, 2635, 6496, 2655, 2596, появилась в период между 1098 г. и второй половиной XII века. После 57-й (ԾԷ) канонической группы Ована Мандакуни "Призыв к покаянию" анонимный редактор добавил "Каноны патриарха Симеона, католикоса Кавказской Албании", включив их в оглавление и предметный указатель.

В промежуток между 1416 г. и XVII в. к пятидесяти семи каноническим группам был добавлен ещё ряд текстов. Это «Третий канон», приписываемый Василию Кесарийскому, группа канонов, известная под авторством Иоанна Златоуста, а также оригиналы Акопа Крымеци "Об обряде венчания" и "О родстве" без общей или специальной нумерации. В XVII в. (до 1651 г.) указанные канонические группы с соответствующей специальной и общей нумерацией были включены в оглавление и предметный указатель сборника под порядковыми номерами 58 (ԾԸ), 59 (ԾԹ) и 60 (Կ) (работы Акопа Крымеци были объединены под номером

60). Эта окончательная редакция рукописной группы "А" Книги канонов представлена рукописями №№ ММ7580 и 3291.

Ключевые слова: *Армянская Книга канонов, рукописная группа "А", каноническая группа, Ован Мандакуни, Акоп Крымеци*

NARINE VARDANYAN – ***Expansion of the Manuscript Tradition A of the Armenian Book of Canons in the Period between the End of XI and XVII Centuries***. – After the 11th cent. (1098 AD) the further development of manuscript tradition “A” of the *Kanonagirk* (“Armenian Book of Canons”) was differently directed. Numerous manuscripts of tradition “A” differ from each other by the groups of canons incorporated after the 57th (ԾԷ) canon group “Call to Repentance” by Hovhan Mandakuni and represent different subgroups of the manuscript tradition “A”.

The next edition of the manuscript tradition “A” of the *Kanonagirk* represented by manuscripts No ММ6409, 8926, 795, 2635, 6496, 2655, 2596 took place in the period between the end of the 11th cent. (1098 AD) and the second half of the 12th century. Thus, after the 57th (ԾԷ) canon group of Hovhan Mandakuni’s “Call to Repentance” an anonymous editor or editors of this version added a group of “Canons of Patriarch Simeon, Catholicos of the Caucasian Albanians”, including it into the list of contents and subject index compiled by himself.

Another edition of the manuscript tradition “A” is represented by manuscripts No ММ9488, 8158, 3706, 4403, 4631, 5782, 7317, 5894, 2883, 3099, 449, 3059, 3065.

In these manuscripts the 57th canon group is followed by a group of canons ascribed to Basil of Caesarea “Third Canon Created by Patriarch Basil of Caesarea - 77 Chapters”; “About the Definition of Canons according to which Priests Repent” attributed to John Chrysostom, and the originals of Hacob Ghrimetsi “About the Rite of Marriage” and “About the Kinship”. After the 15th century (after 1416) and until the 17th century (before 1651) these canon groups were added to the 57 canonic groups of the manuscript tradition “A” without general or special numbering. In the XVII cent. (before 1651) these canon groups with the corresponding special and general numbering were included into the directory and subject index of the collection, receiving in the contents list regular numbers 58 (ԾԸ), 59 (ԾԹ) and 60 (Կ) (the works of Hacob Ghrimetsi were unified under number 60). This final edition of the manuscript tradition “A” of the *Kanoanagirk* is represented by manuscripts No ММ7580 and 3291.

Key words: *“Armenian Book of Canons*”, *manuscript tradition “A”, group of canons, Hovhan Mandakuni, Hacob Ghrimetsi*